



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՀԱՅՈՅ ՄՈԼՈՐԱԿԱՆ ՀԱՍՄՈՎԱԾ ԳՐՔԵՐՆ ԸՍՏ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՄԻ ՀԻՆ ՑՈՒՑԱԿԻ

1341 թվականին Ֆրանսիայի Ավինիոն քաղաքում, որ այդ ժամանակ հաստափած էր պապական արքունիքը, հայ եկեղեցու թշնամիների կողմից Բննողիկոսու ԺԲԻՆ Աերկայացվում էր 117 մոլորությունների մի ցուցակ, որի 110-րդ կետը վերաբերում էր հայոց «մոլորական» գրքերին: Հետաքրքրական է իմանալ, թե որո՞նք էին մոլորությունների աղբյուր համարվող այդ գրքերը:

Նախ ասենք, որ 117 մոլորությունների պատմությունը հանդիսանում է մի օղակը պայմանագիրը՝ որ քաղկեդոնականները, հանձին բյուզանդացիների, ե՛ջ դարերից սկսած տասում էին հայ եկեղեցու դեմ:

ԺԲ դարի վերջերին Կիլիկյան Հայաստանում լատինական Արևմտութքն եկել էր քաղկեդոնական գաղափարախոսության Աերթափանցման պայմանագիրից: Դա արդյունք էր Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցած քաղաքական մի խոչը իրադարձության: Առն Բ իշխանապետը 1198 թվականին վերականգնում էր հայոց անկախությունը՝ արքայական թագ ստանալով Հռոմի պապի և հռոմեական (գերմանական) կայսրի պատվիրավից: Այնուհետև՝ ԺԲ և ԺՊ դարերում քաղկեդոնական գաղափարախոսությունը հոսում էր եկեղեցու գլխավորությամբ և լա-

տինականության յորահատուկ կերպարանով գտալիորեն ծավալվում էր Կիլիկյանում և համապատասխանաբար էլ կազմակերպվում ու ամրապնդվում էր հակալատինական պայմանագիրը, որին լծված էին միաբնյա հայ եկեղեցու ուղղափառության պաշտպանները:

Հիշյալ 117 մոլորությունների պատմությունը հիմնականում կապված է ԺՊ դարի հայազգի հայտնի ունիտոր Ներսէս Պալենցի (Պաղոն) անվան հետ:

Ներսէս Պալիենցը, որ ծննդով Սսեցի էր¹,

¹ Նա իր մասին գրում է մի հիշատակարանում. «Ես տրապի Ներսէս Պալիենց կոչեցեալ, զաւաս Կիլիկյանի, Սըսեցի գոլով և կարգաւոր», տե՛ս M. A. van den Oudenrijn, „Linguae haicanae scriptores Ordinis Praedicatorum“ etc., Bernae, apud A. Francke, 1960, § 499.

Օրմանյան կասկածի տակ է առնում Ներսէս Սսեցի լինելը՝ ճրան նույն համարկալով ուն Ներսէս Տարբնացու մեռ. տե՛ս Մալ. արք. Օրմանյան, «Ազգապատում», Բան. Բ, Կ. Պոլիս, 1914, § 1279: Օրմանյանի մկանի ունեցած անհավորությունը, որը Քոնա էր գնացել և, ըստ երևութիւն, հարել ունիտորներին, 1832 թվականին իր մասին գրում էր մի հիշատակարանում. «Ներսէս, անուածք վարդապետ, բայց գործով վերջացեալ նոյն և մո-

1330-ական թվականներին Կիլիկիայում հանդէս է գալիս ի շարու այն լատինամու հոգևորականների, որոնք, ինչպատճեն ասում է Չամչյանը, «մոտանէին ի կարգ ունիթոնաց, զգեցեալը զգեստ դոմինիկան պատրոց, և կամ ոք միախոն էին ընդ առաւ. և առա առենայնի լատին ծիսիր վարդէին. Եղիս ունաց ի սոցանէ՝ ոք առ ի հանոյ գոտանի առաջի Լատինացցոց՝ մերժէին և արմանարքին զամենայն՝ ոք ինչ Հայոց էր. և համարքին զնոսս իբրև զետեատիկոս, մասնաւոն թէ իբրև զամենատու ուստի և ... այսպիսիր երէ կարդէին լաւկոցանէլ զոմաս ի Հայոց լիունան, անդէն և անը կրկին մկրտէին և դրոշմէին և ձեռնարքէին»⁵:

Ներսէս Պալիենցը 1336 թվականին հիշատակում է որպէս Ուրմիայի եպիսկոպոս։ Այդ ժամանակ նա Կարդէին եպիսկոպոս Միստան Պէտի ենոն միասին անցել էր Կիլիկիա և նվիրվել ունիթորական գործունեության։ Նրանց մասին Չամչյանը գրում է.

«Ուրբ միաբանեան ընու իրեան զարս բանի մի՛ շրչէին հանենքը նորօք ապր և անդոք, և քարոզէին, թէ հարկ է կրկին մկրտել և դրոշմէլ զամենայն Հայու լատինական ծիսիր, և վերատին ձեռնարքի զրահանաւ նոցա, և տաղ պատարագել լատին քարքառով և արարողութեամբ։ Նոյնական փոխել և զամենայն կարգ պատոց և այլոց տվյլութեանց, զի այսու կարացեն միաբանի ընու եկեղեցուն Հռովմայ, և ասէին ըստ գրելոյ Միսիթարայ կաթողիկոսի, թէ՝ Մկրտութիւնն Հայոց է երկրայելի, և պատարագ Հայոց ոչ է ճշմարիտ պատարագ»⁶:

Ներսէս Պալիենցն իր այս գրգոիչ գործունեության համար հալածանեների ենթարկելով ժամանակի նայ նոգեսոր ու պետական իշխանությունների կողմից «իբրև զարհամարիոն և ունինարու ամենալս օրինաց», ի վերջո ապաստանում է Ավինիոնի

խիր վարդապետաց, որդի Վաճրանայ յաշխարհն Տարօն, ի զատէն Սաստ, ի վանաց Պազմարու, ի զեղչեն որ կոչ Կոռո», տես՝ Հ. Դ. Ակիշան, «Ախալամա», Վենետիկ, 1893, էջ 375:

Ներսէս Պալիենցի մասին ընդարձակորեն տես՝ Հ. Դ. Ակիշան, «Հայուպատում», Վենետիկ, 1901, մաս Ա, էջ 122—123:

⁷ Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», Բան. Գ, Վենետիկ, 1786, էջ 330:

Ունիթորների առ շրջանի պատմության համար Չամչյանի (Բան. Գ, էջ 326—332 և 339—347) առդրություն եղել են Միֆիար Սաբարանեցին, Շայնողը և լատինական աց Թիշտառակարաններ։

⁵ Անդ, էջ 330—331:

⁶ Անդ, էջ 331—332 և 339—340:

պատմական արքունիքը, որանում է իր հայկական կարգը, ընդունում է լատինական կանոնիկոս բառանայի աստիճան («սուտիճան» լատինացի գանձօնիկոս բառանաց)՝ և շարունակում նոր դավադրանքներ նորություն նայ եկեղեցու հասցեին։

Չամչյանի մոտ դարձալ կարդում ենք 1341 տարերին տակ Ներսէս Պալիենցի մասին։

«Դատասցեալ նորա ընու այս՝ յուի անկան փորականի և եղեալ գնաց յԱրքինիոն առ ուս բենեթիկոսուի պատին, և ամբատան եղել զազգէն Հայոց բնակելոց ի Կիլիկիա և յարեւան՝ ծանր ծանր շարախօսութեամբը. և զանացան ցուցանել թէ լի եւ Հայոց ամենայն մղրութեամբ. զոյն գրեալ էր յառաջնուն; առ պատին և գրծակիցն Ներսէսի Սիմեոն Պէկ եպիսկոպոսն Կարեն, որ և փախոցեալ էր ի Կիպրոս յերեսաց Հայոց; Կային յարեւանու և այլ ունաւը յազգէ Հայոց ի կարգէ ունիթոնաց, և նորա ևս հաստատեցին զրան շարախօսաց, ընու որս և ունաւը ի Լատինացցոց, ոք ասէին զիներեան զիտակ լինել և փորձ արեւելան իրաց, որպէս գրէ Հռենապրու։ Սորա աներին ի մի հասարեալ առաջնորդութեամբ Ներսէսի Պալիենցի զիներեան զիներեաննար և ստայօն բանս, և ասփոխեցին զամենայն ի գրքով մի, առաջի եղեալ ի նմին զիարիթ եօրենստան մղրութիւնն ի վերայ եկեղեցն Հայոց, և մատոցեալ ցուցին զայն պատին»⁷:

Այս ձեռվ էր ծնունդ տակ 117 մղրությունների պատմությունը։

Ի դեպ ասենք, որ, որպէս այդպիսին, Ներսէս Պալիենցը Պատմության մեջ ունեցել էր իր հախորդները, որոնք այն կամ այն ասիթուվ հայ եկեղեցու դեմ տրամադրություններ հրամրողի դերեր էին կատարել հոմանական աշխարհում։ Աղյափիսիներից էր «Narratio de rebus Armeniae», այսինքն «Պատմութիւն յաղագու իրաց Հայոց աշխարհներ» անոնուվ հայտնի գրքի անձանոյթ հայրականիկության բնակելիք՝ Ը դարի սկզբներից։ Աղյափիսիներից էր Ժ. Մ. դարում

⁵ Օսեոպոյ, § 499.

⁶ Չամչյան, Բան. Գ, էջ 340:

⁷ Այդ գիրքն ունեցել է մի բանի հրատարակություններ, Բնան. Հ. Ա. Անապան, «Հայուպատ մատենագիտություն Ե—ԺԸ. դր.», Բան. Ա, Երևան, 1959, էջ 808—811:

Նոր վերջին և զիտա-քննական հրատարակությունը և ուսումնասիրությունը տվել է G. Garritte-ը, «La Narratio de rebus Armeniae. (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132.—Subsidia, t. 4), Louvain 1967,

Բնագրի նայելում բարգմանությունը տես՝ Հրա

Խայթուի վաճականներից հայագի Նիկոնը, որը հետագա դարերի լատինական մի անանուն հիշատակարանի գնահատմամբ, «զհայրենին որացեալ զհասան՝ ընկապա զհաւանութիւնն Յունաց և գրեաց զմոլորութեանցն, զորս դատանէին Հայք յայնն ժամանակին»⁸. Նրա անունով հայտնի է «Յաղագ ամսպարհչուն կրօնից վատիքարագոն Հայոց» (Պար: Եղ անսանուն նորշեւն: Հայութաւուն Դարենաւ) խորագրով մի գրություն: Այդպիսիներից էր Կեղծ անունով Խամակ Հայոց կաթողիկոս կոչված նեղինակը, որը թողել է թշնամական ոգով երկու գրություններ՝ «Սրբոյ հօրն մերոյ Խամակայ կաթողիկոսի Հայոց Մեծաց Բան նախատական ընդդէմ Հայոց» (Տօն օսւա ուռուն ՚իւնոն ՚Իսաք ու ութունուն Եղ Մեղանուն ՚Ազւենուն ՚Անգուս ու ութունուն ու ութունուն ՚Ազւենուն) և «Բան նախատական Խամակայ յաղագ Հայոց շարափառաց և ներեսիկոսաց» (Անգուս ու ութունուն ՚Իսաք ու ութունուն ՚Ազւենուն ու ութունուն)⁹: Այդպիսիներից էր նաև Հովհաննես Դամասկացու անունով մեզ հասած հայերեն մի անվավեր գրության («Յովհաննես Դամասկացու Պատախանիք առ Հայու») անձանոթ նեղինակը, որին հայ բանափորթան մեջ տրվում է Կեղծ Դամասկացի անունը¹⁰:

Բարրիկան, «Narratio de rebus Armeniae, նունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղաքական սկզբանդրյալ», Բանքեր Մատենադարանի, № 6, Երևան, 1962, էջ 457—470:

⁸ «Compendiosa relatio unionis nationis Armeno-Polonicae cum S. Ecclesia Romana ad annum Christi 1676» (ամսիպ), հմտն. «Յոնի միութիւն Հայոց Լիճաւանի ընդ եկեղեցւուն Հոռվմաք» (թարգմանիչ՝ Ստ. Մալխաչյանց, հրատարակիչ՝ Կ. Եղանց), Ս. Պատերքուր, 1884, էջ իբ և 142:

⁹ J.-P. Migne, „Patrologia graeca“, t. I, Turnholti (Belgium), 1969, p. 655—658.

¹⁰ Ibidem, t. CXXXII, Turnholti (Belgium), p. 1155—1227 et 1227—1237.

¹¹ «Նորին Յովհաննես Դամասկացու Պատախանիք առ Հայու, բանք նախառութեար» (հրատ. Բարգեն Վ. Կյուլսերյանի), Լոյս, Կ. Պոլիս, 1905, էջ 1065—1068, 1112—1115, 1906, էջ 45—48, 116—119, 213—216, 355—359, 474—479, 589—592, 810—815, 957—960, 981—984, 1075—1079, 1124—1126 և 1196—1199:

¹² Հրատարակիչ Կյուլսերյանը թեև շատ չի կասկածում այս գրության վավերականության մասին, բայց և մկանակով, որ նրանուն հիշատարվում են անուններ, որոնք Դամասկացու շատ նետ են նաև նեղինակներ, նաև առ այս նախանականությունը, որ այս գրության ամրուցումն կամ ինչ ինչ մասերով կրնաց Սուտ-Դամասկացիին

ի տարբերություն վերոհիշյալների՝ Ներսես Պալինեցը գործում էր մի բոլորովին նոր միջավայրում, քանի որ արդեն անցել էին բրուգանդական ազդեցության ժամանակները: Նա հանդես էր գալիս լատին եկեղեցու գահակալների արքունիքում, որն այդ շրջանուն հաստատված էր Ֆրանչիայի Ավիշնի քաղաքում:

Մոլորդությունների այն ցուցակը, որ Պալինեցն էր կազմել, մեզ հայտնի է միայն լատիներեն բնագրով՝ համապատասխան ներքումների հետ միախն:

Պալինեցից ամբատանությունները նենց նույն ժամանակներում կետ առ կետ ներքվեցին նավերի կողմից: Նախ Լուս և յագավորի հրամանուն նոյն 1341 թվականին հայագի Դանիել Դավթիթեցին, որը լատին Փրանչիկանների ուժանից էր և անվանվում էր Մնոր (Մինոր, Minor)¹³, գրեց ամբատանությունների արժանի պատախանը¹⁴. Ինսո՞ Սսի 1342 թվականի ժողովը նույնպես զբաղվեց դրանցով և տվեց իր ներքում-պատախանը¹⁵: Պետք է նաև ասել, որ նոյնին հետագա ժամանակների լատին եկեղեցներ (Գալանու, Վիլլու, Լըքին, Մանսի և այլն) քննադատական

գործ մը ըլլալ», տես՝ Բարգեն Վ. Կյուլսերյան, «Յովհան Դամասկացի և նայ եկեղեցի», Լոյս, 1905, էջ 1010:

Ալիմյանը նախ ուղղակի մի հայ-հոգում կեղծիք է համարել այս գրությունը (տես՝ Հ. Ն. Ակինյան, «Կիրիին կաթողիկոս Վրաց», Վինենա, 1910, էջ 69—70). բայց նետազարմ դրա նեղինակությունը վերաբերել է Եվգորատիոն Նիկիացուն (տես՝ Հ. Ն. Ակինյան, «Սիմեոն Պղնձանանցի և իր թարգմանությունները Վրացերենէ», Վինենա, 1951, էջ 98—99), մկանի ունենալով, որ վերջինս ունի նմանօրինակ մի գրվածք (հմտն. K. Krumbacher, „Geschichte der byzantinischen Litteratur“, München, 1897, S. 85).

¹³ Ալիմյան, «Հայապատում», մասն. Ա, էջ 122—123:

¹⁴ Հրատարակված է ամբողջությամբ. „Responsio fratris Daniellis [De Thaurtis] ad errores impositos Hermenit“, տես՝ „Recueil des historiens des Croisades, publié par les soins de l'Académie des Inscriptions et Belles-Lettres. Documents arméniens“, t. II, Paris, Impr. Nationale, 1906, p. 559—650.

¹⁵ Նոյնական նրատարակված է. „Concilium Armenorum, in quo obiecti Armenis in libello errores condemnatur, eorumque fides amplus declaratur, anno 1342 celebratum; ex ms. codice Bibl. thecae Regiae“, տես՝ J. D. Mansi, „Sacerorum Conciliorum nova et amplissima collectio“, t. XXV, Graz, 1961, p. 1185—1270.

վերաբերմունք են ցույց տվել այդ ամբաս-
տանություններին¹⁶:

Դնշակն ասացինք՝ մոլորությունների ցու-
յակի 110-րդ կետը վերաբերում էր հայոց
«մոլորական» գրքերին: Որո՞նք էին այդ
գրքերը:

Համանալի է, որ գաղափարական պայ-
քարը և տվյալ դեպքում ու ժամանակա-
շրջանում լատինականության սահմանակ
արշավի դեմ հարուցված պաշարը կապ-
հանչեր գաղափարական զենքեր, ուստի և
այդ պայքարը գործիքները հետամտու էին
առաջ քաշելու և տարածելու հայ և օտար
եկեղեցական ու պատմական մատենագրու-
թյունից աշնախի երկեր, որոնք հյույթը էին
տախու տեսականորեն ու պատմականորեն
հիմնավորելու և հաստատելու պաշտպա-
նելի տեսակետները. ըստ որում այդ գրքե-
րուն ամբողջությամբ կամ մնամաք, ուղա-
կի կամ անողղակիորեն, մխտում էին հայ
և լատինական եկեղեցների միության զա-
ղափարը. Քաղկեդոնի ժողովն ու երկարեցա
վարդապետությունը, բաժակի շրաբանու-
մը, ծննդյան սովոր առանձնացումը և այլն:
Հայոց մեջ արդախի գրքեր, ի հարկե, շատ
ու շատ կային, բայց հիշյալ 110-րդ ամբա-
տանությունը հանձնանել մեզ տախու է միայն
առանձին գրքերի կամ եկեղեցների 18 ա-
նուններ: Սակայն այդ անունների մեծ մա-
սսը լատիներեն գրված թևագրում այնքան է
աղախալիւել, որ անճանաչելի է դարձել և
վերծանական աշխատանքի է կարողութ:

Ժամանակին Մադ. արք. Օրմանյանը
փորձ է կատարել ճշտելու այդ անունները¹⁷:

¹⁶ Օրմանյան, § 1308:

¹⁷ Անդ, § 1306: Օրմանյանի ճշտումները ներկայ-
ութեան են. «ա. Տօնապարագ կամ Տօնօփակէն կամ
Տօնապար, հոռոմական և բանական եկեղեցներու դէմ գրուած մը, որ պէտք է ըլլայ Տօնա-
պատճառ:—բ. Անատօնարմատ, որ է Հաւատար-
մատ, արմատ հաւատու բուտած:—գ. Ցովհաննէս Մահակումնեցի, որ է Մահրակումնի:—դ. Ցովհաննէս
Օսինեցի, որ է Օձնեցի:—ե. Միաստուրուի կամ Միահակումուրու, իրը Միարանուրեան կամ Միահայնուրեան գիրը բացարուած, զոյց Շնոր-
հալիի և Տղայի միարանուրեան բայդերը:—գ. Մի-
խայէլ պատրիարք Անտիռոյ, որ է Միխայէլ Ասո-
րի:—է. Պողոս Տարոնեցի:—ը. Ոկկենեցի կամ Ոկ-
տանեցի կամ Տոկտանեցի, նմանաձայնութեամբ
Եղիզմ ալ դժուար:—թ. Մատրէս, որ պէտք է
Ռումակին ըլլայ:—ժ. Կանոնք առաքեց, որուց
մէջ, կ'ըսեն, Հայոց մոլորությունները կը պարունա-
կիին:—ժա. Սարգիս, որ պէտք է ըլլայ Սարգիս
Շնորհապին:—ժր. Մարուկէ Վարդապետի անու-
րաններու մէկնութիւնը, մեզի անճանօթ:—ժգ. Վա-
ճանամի մէկնութիւն Յովհաննու, որ Վաճական կամ

բայց նա ձեռքի տակ ունեցել էր միայն մեկ
հրատարակություն՝ Սահ ժողովի որոշումնե-
րը: Մենք ևս փորձում ենք ճշտել այդ ա-
նունները՝ ձեռքի տակ ունենալով, բացի
նոյն հրատարակություննից, նաև Դամբել
Դավիթինցու պատասխանների հրատարա-
կությունը՝ օգտագործելով նաև երկու հրա-
տարակությունների մէջ նշանակված բոլոր
տարրերակները¹⁸: Ի միջի այլոց՝ դժվար չէ
նկատել, որ անունների բազմազան տար-
րերակները հետևածու են ձեռագործում
լայնական տառերի փոխադարձ շփորու-
թյունների և լատիներենի համար հայերեն ա-
նունների ներկայացրած հնչյունային դրժ-
վարությունների:

1. **Տոնապաշար, Տոնապաշաչ, Տոնօփա-
սեն, Տոնօփաչեր**¹⁹. **Տօնապատճառ**.—Ցո-
ւցակի գնահատմամբ՝ սա մի գիրը է, որը
«հակառակ է հոռոմական և նունական ելե-
ղեցների ընդունած տուներին»:

Այս գիրը կազմել էր, Ժ դարում, Սա-
մուել Կամբչանութեցին, որի մասին խուժին
Չափանակ ասում է. «Որ և գրեաց գիրը մի
Տօնապատճառ ասացեալ՝ ի վերա խորհրդու-
յու տօնից և պաշտպանուց եկեղեցու»²⁰. իսկ
Ակիշանի ավելացնում է, որ «վեսոյ որիշ
վարդապետը ալ ԺԲ դարու մէջ՝ շատ բան
աւելցուցին ի Տօնապատճառու, կամ նոր ի
նորոյ գրեցին և հասպեցին, անոր համար
շատ մեղ իրարմէ կը տարրերին այս ա-
նունը գրեանք»²¹: Տօնապատճառ գրի
զանազան ձեռագործ շատ կամ Երևանի
Մատուցյան Մատենադարանում և այլուր:

Այս գրքերն ընդհանրապես սուր քննա-
դառնության առարկան են եղել բաղկեղունա-
կանների համար:

Վարդապետ պիտի ըլլայ, թէվէս Յովհան-
նու մէկնութիւն գրած ըլլամին բայտին չէ:—ժդ. Իգ-
օսատիս, որ է Խօսատիս Շնորհապի Դուկասի մէկ-
նութիւնը:—ժե. Գանձական, որ է Գանձանապիրը:—
ժդ. Նեկինոս Պատարագին կամ Պատարագին Մեհ-
քին, իմա՞ Մէկնութիւն պատարագի՝ Լամբրոնա-
ցին գրածը:—ժէ. Տեղորդունտ կամ Տեղորդիկը,
Գիրը խճոյից բարգմանուած, ճշկեր դժուար:—ժր.
Աշմաւորդ, որ է Յաշմաւորը»:

18 Մեր այս աշխատանքների համանական ար-
դյունքներու որիշ ատիքով ներկայացրել էինք որ-
վագծային ձևով. տես՝ Հ. Ս. Անապան, «Վարդա-
պատճառի իր նորացաւ երկերի լույս տակ», Վա-
ճանակի, 1969, էջ 36—37 (նույնը՝ Բազմավայ-ում,
1968, էջ 265—266):

19 Այսաւել իրար մեն շփոթված տառերն են
օ-օ, ա-ա, բ-բ, բ-բ. նաև՝ բ-բ.

20 Չափանակ, նու. Բ, Վանասիկ, 1785, էջ 823:

21 Ակիշան, «Շնորհապի և պատարագ իր», Վանա-
սիկ, 1873, էջ 31:

2. Hanadoarmat. Anadoarmat²². Հաւատոյ արմատ կամ Արմատ հաւատոյ (լրիվ խորագորով՝ «Գիրը հաւատառութեան և արմատ հաւատոյ»):

Այս գիրը ժ՞գ դարի սկզբին (1205 թ.) Վարդան Այգեկցին էր կազմել՝ հայ եկեղեցու միաբնյա դավանաճքը և ծիսական կարգերը պաշտպանելու համար «ընդդէմ երկարնակաց և ամենայն հերձուածողաց». մնում է անտիպ²³:

Ինչպես Շենքինը²⁴ Օրմանյանը և Հանածոարմատ-ը հաւատառում է որպես Հաւատարմատ՝ Արմատ Հաւատոյ, բայց նա նկատի ունի ոչ թե Վարդան Այգեկցու կազմած ժողովածուն, որը տակավին չէր հայունաբերված Օրմանյանի օրերին, այլ, առանց տարակուսի, Անամիա Նարեկացու կորած «Հաւատարմատ»-ը, որի մասին եղած եզակի հիշատակությունը գտնվում է Ժ դարի պատմիչ Ուխտանեսի մոտ²⁵: Պեսր է, սակայն, նկատի ունենալ, որ ԺԳ/ԺԴ դարերում Կիլիկյան Հայաստանի դավանաբանական պայքարի բեմի վրա դեր կատարողը Վարդան Այգեկցու հիշյալ ժողովածուն էր, որի դեմ դիրքավորված էին լատիներն ու լատինամոլ հայերը:

3. Johannes Mandagonensis. Յովհաննէս Մանդակունի.—Բացատրություն չի տրվում:

Ցուցակն անշուշտ նկատի ունի առաջին հերթին «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապեսի՝ Ապացոյց յերկու բնութեանց ասել զՓրկիչն և կամ մի բնութիւն» գրվածքը²⁶, որը միաբնյա տեսությունն է պաշտպանում և պատկանում է Հովհաննուն Մանդակունի կաթողիկոսի (478—490 թթ.) գրչին: Այս գրությունն ակներևորեն մի հատված է Մանդակունու կողմից Քաղկեդոնի ժողովի դեմ ուղղված մի պահի ընդհարձակ գրության²⁷, ինչպես ցուց է տալիս

²² Ծիրությ վ. ո.

²³ Հ. Ա. Անապան, «Վարդան Այգեկցին իր նորացու երկրի լոյփ տակ», էջ 7—10 և 19—35: Արտասալքած է Բազմավեպ ամսագրի 1968 թ. 7—12 միացրած համարներից:—Նոյն, «Հայ պատմա-դավանաբանական գրականության թանգարժեք հուշարձակը. Գիրը հաստատութեան և արմատ հաւատոյ», Էջմիածն ամս., 1972, № 8, էջ 27—36. № 9, էջ 45—56: Նոյն, «Ներսն Շնորհալին և Արմատ հաւատոյ՝ ժողովածուն», ամս., 1973, № 12, էջ 83—92:

²⁴ Տես վերևում ծամ. 17:

²⁵ Ոխտանես Խոխուպոս, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 11:

²⁶ Տես՝ «Գիրը թղթոց», Թիֆիս, 1901, էջ 29—40:

²⁷ Տես՝ Կար. եպս. Տեր-Մկրտչյան, «Յովհանն

«Կնիք հաւատոյ»-ում նրանից բերված մասի խորագիրը՝ «Երանելոյն Յովհաննուն Մանդակունու Հայոց կաթողիկոսի ի հականառութենեն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց»²⁸: Այս փաստն անվիճելի է դարձնում Հովհաննուն Մանդակունու հեղինակությունը՝ հակառակ որոշ բանասերների այն կարծիքին, թե Մանդակունին չէր կարող հետինակը եղած լինել հակաքաղկեդոնական «Ապացոյց»-ի²⁹: Սակայն փաստ է, որ բաղկեդնականները Մանդակունուն արդեն ըննադատում էին այն բանի համար, որ նա նոր ի նոր կարգավորել էր հայոց Ժամագիրը և համարում էին, որ դա իրը թե նախկինում եղած հարազատ կարգավորման խախտումն ու եղումն էր:

4. Johannes Ossinensis. Յովհաննէս Օձեցի.—Բացատրություն չի տրվում:

Որպես Մանդակունուի հակաքաղկեդոնական ժողովի (726 թ.) գումարող՝ Հովհաննուն Օձեցի կաթողիկոսը (717—728 թթ.) համարվել է բաղկեդնականության մեծագույն թշնամիներից: Որպես այդպիսին՝ նա այնքան հայտնի դեմք էր, որ նույնիսկ մինչև վերջին դարերը լատինները հայադարձություն ունենալու համար անհնարինություն էին առաջանալ:

Մանդակունի և Յովհանն Ապրագունցի», Յովհակար (ժողովածու), Էջմիածն, 1913, էջ 92—98:

²⁸ «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, յուղափառ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դասանութեանց լաւուր Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ», Էջմիածն, 1914, էջ 130—133:

²⁹ Հ. Ն. Ակիննան, «Կիրիկն կաթողիկոս Վրաց», Վինենա, 1910, էջ 44: Հ. Վ. Հացմունի, «Կարուր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն», Վանենիկ, 1927, էջ 382:

Հ. Մանդակունը, հաշվի առնելով «Ապացոյց»-ի նունարան ինքիլի առանձնահատկություններն ու նաև համարելով, որ նրա նեղինակը կարող է ծանոթ եղած լինել Արիստոտելի երկերի հայերն թարգմանություններին, գտնում էր, որ նիմքեր չկան այն վերագրելու և դարում ապրած Հովհաննուն Մանդակունն: Նա գրել է. «Եթէ «Ապացոյց»-ը համարի հայ նեղինակի աշխատութիւն, թում է իշճ, անհաւանական չի լինի նեթադրել, որ նրա ժամանակը դրւելու է արիստոտելիան հնագոյն թարգմանություններից յատոյ և... յօրինուած պիտի լինի Արիստոտելի Ստորոգութեանց թարգմանութիւնցի յատոյ», հետևաբար՝ ոչ վաղ, բան Զ դարի վերջերը (տես Հ. Մանդակուն, «Յովհանն պարոցը և նրա զարգացման շրջանները», Վինենա, 1928, էջ 254, լենգծումները մերն ևն): Սակայն Գալ. Տեր-Մկրտչյան, արդեն նշել էր, որ նունարան հայերնի գոյության փաստը մեզ հայտնի է դեռ Ե դարի 80-ական թվականների սկզբներից՝ Տիմոթեոս Կուզի «Հականառութեան» թարգմանութեամբ (տես Գ. Տեր-Մկրտչյան, «Հայ մատենագրութեան հնագոյն թականնեները», Յովհակար, էջ 158—159):

վանելիքին տախու էին օձնեցականներ կամ օձնեցական հերձուածողներ անոնք: ԺԵ դարի վերջերին Հերոնիմու Լեռացին հայերի դեմ գրած «Թուղթ վիճաբանական»-ի առաջարանում նրանց անվանում էր «օձածնունդը և օձնեցածնունդը, որդիք հերձուածողաբես Յոհան Օձնեցոյն», և վերջինին մասին ասում էր, թե «պղծեաց թունար օձն զազգն Հայոց ի չարածողովն Մանազկերտի»³⁰: Մեր ցուցակն ամենայն հավանականությամբ նկատի ունի հատկապես նրա «Սակո ժողովոց որ եղեն ի Հայոց»³¹ և «Ընդդէմ այնցիկ որ ապականեն զորք խորհուրդն ի ձեռն խմորոյ և ջրոյ»³² երկերը: Հարվածի տակ առնված պիտի լինեն նաև նրա մրու գործերը՝ «Կանոնը», «Ընդդէմ Պատղիկանց», «Ընդդէմ երկութականց», «Յաղագ կարգաց եկալեցոյ» և այլն³³:

5. *Liber Miascosurus, Myascosurum, Myascosutum, Myastosury.* Տրված է անվան թարգմանությունը՝ «[Liber] սուս locutionis». Հայ երկութիւն պետք է հաւանակ՝ լատ. սուս (սեռ. սուս) «մի» և locutio (սեռ. locutionis) «քան», ուստի՝ Գիրը միաբանութեան:

Անտարակոյու Ներսես Լամբրուսցու կազմած «Պատճառ խմբոյ միաբանութեան՝ թագառորին Հոռոմց Էմմանուէլի և սրբոց կարութիկոսացն Հայոց Ներսիսի և Գրիգորիսի» ժողովածուն է³⁴, որ ի մի են ամփոփի:

³⁰ «Թուղթ վիճաբանական յաղագ սուր ուղղափառ հասատոյ վասն պատասխանատրութեան սուրատված գիրսն օձնեցական հերձուածողաց, զոր կրծեցին ներածորին անուղից և համառու հապառուն, ի բույն փելչին 1688, որ է Հայոց Թմ՛լ», Օքֆորդի Յօնելեան Library Armenian Manuscript F. 12.

³¹ Տես՝ «Գիրը թթոց», էջ 220—235:

³² Անդ, էջ 234—238:

³³ Տես՝ «Յովհաննու իմաստաբիրի Աճնեցոյ մատենագրութիւնը», Վանևիկի, 1833:

Հովհ. Օձնեցու անոնմով հրատարակված կա հայարակերնական մի ուրիշ գրվածք ևս՝ «Խոստավանութիւն անշարժ յատը մարմացելոյ Բանիք» Քրիստոսի, և ընդդէմ դատանողաց զի՞ն Քրիստոս յերկու բնութիւն», Արարատ, 1896, էջ 192—199: Լուս է տեսել նաև առանձին (ուս. Վաղարշապատ, 1896): Բայց նորաց և Բյուզանդացին այս ճառը վերաբուժ է Յովհաննես Դրասիանակերտոցու, տես նրա բորբածո՞ «Յովհանն կարողիկո Դրասիանակերտոցու պատմագրին» նորացիս մի ճառը», Հանդէս Ամսորեա, 1897, էջ 157:

³⁴ Տես նետկայ հրատարակության մեջ. «Թուղթ ընդհանուրական արքեակ երից երանեակ սուր մայրապետին մերոյ տեսան Ներսիսի Շնորհագոյ», Եջմիածին, 1865, էջ 113—280:

ված ԺԲ դպրում Ներսես Շնորհագոյ և Գրիգոր Տղայի օրով հայ և բյուզանդական եկեղեցիների միավորում համար կատարված բանակցությունների վավերագրերը: Այս ժողովածուն աշքի փուշ էր բայկեղունականների համար, որովհետև նոյն բանակցությունների վերաբերյալ Շնորհանումի կազմած հաղորդագրությունների³⁵ ոգուն չեր համապատասխանում³⁶:

6. *Liber Michaelis patriarchae Antiocheni. Միքայէլ-գիրը, Գիրը Միքայէլի պատրիարքի Անտիոքայ.*—Բաւարութիւն չի տրվում:

Հայ մատենագրության մեջ հայտնի Միքայէլ Ասորու Ժամանակագրական երկն է: Միքայէլ Ասորին Անտիոքի հակոբիկոս պատրիարք էր (ԺԲ. դ.): Նրա «Ժամանակագրութիւն»-ը, որը 1248 թվականին քարդմանվել էր հայերնենի, հակաբաղկերնական գործ գրվածք պատմական գրք էր և դրանով էլ հեղինակություն էր վայելում հայերի մոտ՝ որպես «հիմն հաստատ և աշտարակ անշարժ հայաբառան հաստատ և ուղարկած խոսողվանութեան», ինչպես գրու էր քարդմանից Վարդան Արևելցին գրի վերջում³⁷:

7. *Paulus Taronensis. Պողոս Տարոնեցի.*—Բացասարություն չի տրվում:

ԺԱ. դարի հակաբաղկերնական հետինակ: Ցուցակն անշարժ նկատի ունի նրա ոչ միայն «Ընդդէմ Թէոփիստեայ» խիստ հականատական գրվածքը³⁸, այլև մրու գործ

Առ այժմ հնարաբոր չէ ասել, թե մեր ցուցակում ի՞նչ տղիմ է առաջացել միաբանութիւնի բարի արտակարար աղավարում. Ծնուի հետ մնացել նրա միայն սկզբանից երկու տառեր (Մա-.):

³⁵ Հայերն թարգմանությունը՝ «Առարումն ի մեծէն կայսեր: Մանելիք: առ Հայոց, յորու դեմ արք արայ իրկշուակն Յովհանն Սրիսեն ընդ կաթողիկոսին Հայոց՝ տեսան Ներսէսի», տես նետկայ հրատարակության մեջ. «Միաբանութիւն Հայոց սուր կելուցուցն Հոռման... ի կարգէ Թէատինասաց Կոլմէս վարդապետէ», հատ. Ա., Հոռոմ, 1890, էջ 242—322:

³⁶ Այս բանակցություններին վերաբերու հայերն և հովհանն վավերագրերի միջև կոճա հականատական պատմագրութիւնը, Երուսաղեմ, 1870: Գոյություն ունի նաև նրա մի համառու խմբագրությունը՝ «Ժամանակագրութիւն տեսան Միքայէլի Ասորու պատրիարքի, համեակ ի հմագոյն գրչագրէ», Երուսաղեմ, 1871:

³⁷ «Տեսան Միքայէլի պատրիարքի Ասորու ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1870: Գոյություն ունի նաև նրա մի համառու խմբագրությունը՝ «Ժամանակագրութիւն տեսան Միքայէլի Ասորու պատրիարքի, համեակ ի հմագոյն գրչագրէ», Երուսաղեմ, 1871:

³⁸ «Թուղթ երանելուցն Պողոս Տարոնեցու յաղթոյ

ծերը՝ «Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի»³⁹ և «Վերլուծութիւնը կարգաց եկեղեցոյ»⁴⁰:

8. Octavensis, Toctanensis, Occipensis⁴¹. Ուխտանէս։ —Բացատրություն չի տրվում։

Նկատի ունի Ժ դարի պատմագիր Ուխտանէսին և նրա «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» երկը, որը գրված էր Անահիա Նարեկացու առաջարկով։ Այս երկը նրա եռամանյա պատմագրութեան երկրորդ մասն է կազմում⁴² և հակաքաղկեդոնական խիստ ոգի է ցոյց տալիս վրացական եկեղեցու բաժանման կապակցությամբ։

9. Liber Mattheaeus. Մատթեոս-գիրք։ —Բացատրություն չի տրվում։

Նկատի ունի Ժ դարի պատմագիր Մատթեոս Ուխտացու «Ժամանակագրութիւն»-ը⁴³, որն ամեն առիթով խարանում է բաղկենականության գաղափարը՝ հայրուղանական հարաբերությունները Ակարագրելիս։

10. Canones apostolorum, Liber Canonicum apostolorum. Կանոններ առաքելականք։ —Ասվում է, որ «ապարունակում է հայոց բոլոր մոլորդությունները»։

Հայկական Կանոնագրքի Ակգրում գտնովում են երկու կանոնախմբեր, որոնք անվանվում են Առաջին առաքելական կանոններ և Երկրորդ առաքելական կանոններ։ Առաջինը խորագրված է՝ «Սահմանը և կանոնը զոր եղին աշակերտքը Քրիստոսի եկեղեցոյ սրբոյ՝ յատ վերանալոյ Տեառն»⁴⁴, իսկ Երկրորդը՝ «Սահմանը և կանոններ առաքելոցն՝ ի ձեռն Կոհեմայ, առաքեալ հերթանուաց»⁴⁵։ Ցուցակը նկատ ունի միայն առաջին կանոնախումբը, որի ծագումն ասորական է⁴⁶ և որը, որպես անվագեր, անախույնան փարուապետի ընդդէմ Թէոփիատեաց», Կ. Պոլիս, 1752։

³⁹ Տես՝ «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկարակաց», Նդր-Զուղա, 1888, էջ 378—450։ Տարօնեցու այս երկը նախորդի համառու խմբագրությունն է։

⁴⁰ Վաճառքիկ Միհիթայան Մատթեարաբանի ձևութեան 304, էջ 60ը—63ը։

⁴¹ Շիփրում՝ լ-ս, ա-ս, ո-ս.

⁴² Ուխտանէսի եռամանյա պատմության Գ. մասը կրուծ է. իսկ Ա. և Բ. մասերը հրատարակված են միասին։ «Ուխտանէսի եպիսկոպոս»։ Հատուած առաջին։ Պատմութիւն Հայոց։ Հատուած երկրորդ։ Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», Վաղարշապատ, 1871։

⁴³ «Մատթեոս Ուխտացու. Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898։

⁴⁴ Տես՝ «Կանոնագիրք Հայոց» (Քրատ. Վազգեն Հակոբյանի), Բն. Ա, Երևան, 1964, էջ 18—66։

⁴⁵ Տես՝ անդ, էջ 67—100։

⁴⁶ Հ. Հ. Տաշյան, «Վարդապետութիւն առաքելոց անվաերական մատենամբ», 1896։

ընդունելի էր հունական և լատինական եկեղեցիների համար։

11. Liber Sergniz, Sergium⁴⁷. Սարգիս-գիրք։ —Բացատրություն չի տրվում։

Ժ դարի հեղինակ Սարգիս Շնորհակու «Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուիկեաց» երկն է⁴⁸, որի մասին Զամշյանն ասում է, թե ձեռագիր օրինակներում «քարձեալ են ուսանք զայլ և այլ բան ուղղափառ վարդապետութեան նորա, որպես յայտնի տեսանի հետաքննին ընթերցողաց։ Զայլ վկայէ և Միհիթար Ապարանեցի, որ էր ի կարգէ ունիթուաց. որ և ըստ վկայելոյ իրոյ՝ ամս լիսուն դեգերեալ էր լրճերցմուն ինչ մատենից գրութեան նախնեաց մերց, և հաստատէ բանիւր թէ ինչ ինչ փոփոխեալ է ի գիրս Սարգսի ի տագիտաց»⁴⁹: Սարգիս Շնորհակին, որը հեղինակ է նաև որիշ երկերի, Քարաշիթավի վանականեթից էր⁵⁰։

12. Liber Marucha, Marocha. Ասվում է, թե Ավետարանների մեկնություն է, որն այդպես է կոչվում հեղինակի անունով։ Մարգարմեցին է. այդ մասին՝ ստորև։

13. Liber Nanam, Ranam, Vanam⁵¹. Նաման-գիրք։ —Ասվում է, որ Հովհաննու Ավետարանի մեկնություն է։

Հայունի Նաման կամ Նաման⁵² ասորի հեղինակի գիրքն է։ Թ դարի միաբնակ՝ հակորիկյան այս հեղինակը մոտիկ հարաբերությունների մեջ էր եղել հայերի հետ⁵³։

⁴⁷ Այս անունն, առանց տարակուսի, գրված է եղել Տերզու կամ Տերզու ձևով։ Միշին հայերնենի գի վանկը զու ձևով տալը տվյալան է այս ցուցակի համար (տես նաև ստորև՝ ծան։ № 67 և 73)։ Այստեղ՝ զու վանկը տաների շփոթմամբ նախ դարձել է զու և ապս՝ զու և զու։ իսկ բատավերչի ը-ը դարձել է չ և ու։

⁴⁸ «Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուիկեաց», արարակ երանեկույն Սարգսի շնորհակու վարդապետի՝ Հայոց իմաստափիր և բաշ նուստորի», Կ. Պոլիս, 1826։

⁴⁹ Զամշյան, Բն. Գ, էջ 398։

⁵⁰ Զամշյան, Բն. Գ, էջ 56—57, 397—400։ Հ. Գ. Զարքհանալյան, «Պատմութիւն հայ նին դպրութեան», Վաճառքի, 1932 էջ 648—647։

⁵¹ Շիփրումներ՝ ո-ր, ո-ս, ո-ու։

⁵² Հայ պատմական արյուրներում հիշատակվում է երկու ձևով էլ. տես՝ «Հապարտման պատմութիւն Վարդապետի լուսարանար», Վաճառքի, 1862, էջ 78 և 82 (Նաման)։ «Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 79 (Նաման)։

⁵³ Ալիմյան, «Թէոփորոս Ապիկուս և Նաման Ասորի Հայաստանի մեջ և Նամանի Յովհաննու մեկնութեան հայերն թարգմանութիւնը», Հանդէ Ամսօրեալ, 1922, էջ 103—205, 357—368, 417—428։

Հայոց պատրիկ Աշոտ Մասկերի իշխանության օրու, 812 թվականին, եռ երա արքունիքում քաղկեդոնական գաղափարների քարոզությամբ էր գրալվում եղեացի Թեղողրու Սքու-Կուռա (Եպիկուռա) եպիսկոպոսը, Նաև Աստրին գալով այնուո՞ւ սարտնել էր երա հետ և, հաղթելով, երան հայածել էր տվել այնունից⁵⁴:

Ավելի ուշ՝ հայոց պատրիկ Բագրատ Բագրատունու օրով, 835 թվականին, նորից է հիշատակվում Նաև Աստրին, որի մասին Զամշյանի մոտ կարդում ենք.

«Եւ էր ի նմին ժամանակի սարկանագալես ոմն աստրիկ Նաևա անուն, այդ բանիքուն և փիլիսոփայ. ինորեաց ի ամսէն Բագարատ՝ յօրինել զմեկնութիւն Յովհաննու Աւետարանին. և երա առանձնացեալ ամս երիս ի կողման Միջագետաց՝ յօրինեաց զայն աստրերէն՝ բաղեազ ի մեկնութենէն Յովհաննու Ուկերերանի. և ապա բարգմանեաց ինքն ի լեզու Հագրարացոց և ընծայաց Բարգարատայ, որովմետու բազ գիտէր նա զայն լեզու: Եւ զայն գիտը յետոյ ես բարգմանել ի հայու Ամբար Բագրատունի»⁵⁵:

Նաևայի այս «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին»⁵⁶ երկն է, որ նկատի ունի ցուցակը:

14. *Liber Ignadius. Իգնատիոս-գիրք.*—Ավելու է, որ Ղուկասու Ավետարանի մեկնութքուն է:

Նկատի ունի ԺԲ Ժարի նեղինակ՝ Սև լեռան Շափիրին անապատի վանականներից եզնատիոն վարդապետի⁵⁷ գրած մեկնութքունը⁵⁸, որում, ինչպես Զամշյանն է ասում, կային «քազում ինչ խորդ և անվարդ» (ինա՞յտինների համար անընդունելի գաղափարներ ու արտահայտություններ), որուք իր՝ Զամշյանի կարծիքով անհավատարիմ գրիշների կողմից էին մուծված այդ երկի մեջ⁵⁹:

15. *Liber Ganazan, Guanazan, Guanazam*⁶⁰. Տրված է ավան լատիներեն բարգ-

⁵⁴ «Հաւարտման պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբան», էջ 78:

⁵⁵ Զամշյան, նու. Բ, էջ 441:

⁵⁶ «Նաևայի Աստրոց վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին», Վեմետիկ, 1920: Հրատարակել է Հ. Գ. Չրաբյանի աշխատասիրութեամբ:

⁵⁷ Զարքբանալյան, էջ 642—643:

⁵⁸ «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արքեալ սուրբ վարդապետին Խօնաւիսի, ի խնդրոյ տեսան Գրիգորիի Հայոց կարունիկոսի», Կ. Պոյս, 1824:

⁵⁹ Զամշյան, նու. գ, էջ 57:

⁶⁰ Այս ամուսն, ինքը, գրված է եղել, միջին

մասնությունը՝ «Liber virgarum», այսինքն՝ Գիրք գաւազանաց կամ Գաւազանագիրք: Գաւազան հշանակում է «իշխանություն», «կարգ և աղիսակ համապետաց, բազարությաց, իշխանաց, հայրապետաց և այլն»⁶¹:

Հայ միջնադարյան գրականության մեջ կամ թագավորների, կայութիկուների և այլ իշխանակուների մի շարք գաւազանագրքեր. բայց այնպիսին, որը կարող էր առարկա լինել քաղկեդոնականների առելության ու թշնամական վերաբերմունքին, ե՞ր նոունական ու բյուզանդական կայսերների այն ժամանակագրական պատմությունը կամ գաւազանագիրքը, որը բանասիրության մեջ հայտնի է Կայսերաց գիրք անունով և, անսարակույս, այդ անսանոն երկի մասին է խոսք մեր սույն ցուցակում:

Կայսերաց գիրքը (բնագիրի խորագրով՝ «Կայսերք Հռոմանեցոց և գործք նոցա» կամ «Կայսերք Հռոմոնց») կցված է Է դարի երկրորդ կեսում Անանիա Շիրակացու ձեռքով խմբագրված ժամանակագրությանը, որ առաջին անգամ, 1904 թ., հրատարակեց Հ. Բ. Սարգսյանը⁶² և մետու, 1943 թ., Ա. Գ. Աբրահամյանը⁶³: Կայսերաց գիրքը ձեռագրերում հաճախ է պատահում առանձին⁶⁴ և հիմքեր չկան պնդելու, թե Շիրակացին ինքն է այն կցել իր խմբագրած ժամանակագրությանը:

Կայսերաց գրքի արբյուրները թեև լրիվ չեն ուսումնակիրկած տակալին, բայց Սար-

բակերների արտասանությամբ, զանազան, և սպառաձիկ է զանազան, այն բանի հնաւանքով, որ լատիներներ զ տաղի գործածություն չփոխ տանց ս-ի: Այս հաշվով՝ նաև կամ զա ձևով, ինչպես զի վանկն արտահայտված էր զու ձևով (հնան, վերևուում ձան. 47). իսկ զա կամ զա վանկը շփորձանք դարձել է զա և զա: Զանազանի երկրորդ և երրորդ վանկերում տեղի են ունեցել նաև ն-ու և շփորձություններ:

«Եւոյ բագիքը հայկական լեզուի, երկախորութիւն երից վարդապետաց լաշակերտություններ: Անձին Միխարաց արքանոր՝ Հ. Գրիգորիի Անտիկան, Հ. Խաչատրոյ Միրմելեան, Հ. Մկրտչի Աւգուստան, նու. Ա, Վեմետիկ, 1836, էջ 532:

⁶² «Անձանուն ժամանակագրութիւն խմբագրի յօրինակ լ' է դարու ի հնագոյն ժամանակադրյաց և հրատարակեալ Անընդունեամբ և բարդապետաց թամբքը», Վեմետիկ, 1904, էջ 35—80:

⁶³ «Անձանուն ժամանակագրութիւն խմբագրի յօրինակ մասնակիանու հնամարողի մասնագրութիւնը: Տեքստը մշակեց և հրատարակության համար պատրաստեց պրոֆ. դ-ր Ա. Գ. Աբրահամյան, Երևան, 1943, էջ 378—399:

⁶⁴ Երևանի Մաշտոցան Մատ. ձև. № 7993 (էջ 193ա—206ա), Վեմետիկի Միխարաց Մատ. ձև. № 261 (էջ 85ա—97թ) և որիշներ:

դիմանի ոշաբրությունից չու վրիպել, որ
Երանուս Թեոդոս Փոքրի թև ավորությանը
հաջորդող շրջանի համար, հատկապես
եկեղեցական պատմության Կոյարերայլ,
տեղեկությունները պետք է մեծ մասամբ
հափառված լինեն Զ դարում և Է-ի ուսին
կեսում գրված ասորական և հայութան
այնպիսի հիշատակարաններից, ո՞նցը
միաբնակների կուսակցական ոգով են և
գորված⁶⁵: Եվ իրոք, սկսելով խոսել Մարտինի
կիանոսի թագավորության (450—457 թթ.)
մասին, Կայսերաց գրի հայ խմբագիր
ըննադատարար ասում է, որ Աս, Մարտինա-
նոսը, «քինանինիր եղեալ լուժմանն Նես-
տորի... զի էր ինքը նորին աղանդոյ առա-
ւել ևս վարժեալ», Օրան (Նեստորին) ար-
դարացնելու համար գումարեց Քաղկեդոնին
ժողովը՝ Հոռի Լևոն Ս. պապի հետ գոր-
ծակցարար. և ապա, վերջինիս ևս անվանե-
լով «աղանդակից Նեստորի խոսովանու-
թեանցն», «նախնական հայութիչ» և «ըս-
կրօքնաւոր ժողովոյն Քաղկեդոնի և արի-
նադրադ երկուց ընութեանց», շարունակ
դատավիետում է Քաղկեդոնը՝ որպես «կոր-
ծանական ժողով», «հայութիչ ժողով» և
այլն, և նրա որոշումները՝ «Անովնի հայ-
ութիւնինք», «գիր հայութիւնանցն Ղևով-
նի», «հայութիւնը և անարէն սահմանա-
դրութիւն», «պիհծ սահմանադրութիւն» և
այլն, և այս ձևով հասցնում մինչև Կոս-
տանի Պոգոնաստո կամեր հրավերով
681 թ. 4. Պոլսում գումարված ժողովը, որ
քաղկեդոնականներն անվանում են վեցե-
րորդ տիեզերական, և որի մասին պատեղ
ասվում է, թէ «հիմնադրեալ զհայութիւն
պղծոյն Ղևովնի, շինեցին ի վերալ զալեկա-
դրեալ ուրացութիւնն Մարտինոսի և Մար-
տիմոսի՝ երկու ընութիւնն, և երկու կերպա-
րանն, և երկու ներգործութիւնն, և երկու
կամ ի վերայ Քիստոսի ասեղով»⁶⁶:

16. Pataraquin Mehgging, Pataraquin Mebgging, Neginus Pataraquin, Naguig Pataracum⁶⁷. Ասկում է, թե Պատարագի մեկնություն է, ուստի՝ **Մեկնիչ պատարացի:**

Հայտնի չէ, թե ո՞ր գործի մասին է խորբ: Նման գործեղ ուժեղող նկահնակներ են:

⁶⁵ Տե՛ս «Անանուն ժամանակագրութիւն...», Նիշածավառ, էջ ԺԲ:

⁶⁵ Shu wén, 19 63—79:

⁶⁷ Աղասին պատարգին բառի վերջին վանկը գրված է զան ձևով (գի-զի համեմատության մասին տես Վերլում ծան. 47), որն, այլայլիով, դարձել է նաև շատ: Խակ մեկնիչ բառի ստացման վանկը գրված է եղել ուց, որը դարձել է ուցեց, ուց և ուց: Երկրորդ վանկը գրված է եղել ուց, որը դարձել է ուցեց, ուց և ուց:

Խոսրված Անձեւացի⁶⁸, Ներսէս Լամբրոնացի⁶⁹, Հովհաննես Արճիշեցի⁷⁰, Սովորս Երգնակացի⁷¹, Հովհաննես Պլուզ⁷²:

17. *Textorquire. Teytorgunt*⁷³. Տպած է անվան թարգմանությունը՝ «*Liber epistolarum*», որին է Թղթոց գիր:

Σκανηή τιςέρι ψωτούμακαί τι ηψωτούμα-
ρωμακαί μακαί ψωτούμαρφτερήι ωζε διαγνόθηι σπη-
ληψωδοτην, πρ «Φηρρού θηληση» αιστούντη πι-
άτερη μέτρα διεργοτην⁷⁴ και πρήι ψωτούμακαί διρυ-
μαρφτούμερ ψωτούμακαί ψωτούμακαί, ψωτούμακαί έτρ
298 θηληση⁷⁵: Έχει σπηληψωδοτην διαψ-
έρι έτητε έ φωτούμαρφτεραί διαγνόθητε διαγ-
νόθητε ρωηλετρούμακαί διαγνόθητε πι διασπ-
ρωμακαί πιριώνη ητει ιπαρψη ομηρημα-
τησιών.

18. Ար գույքարի համար: Aysyjanօլոց, Aismanore, Aismavort, թյունը՝ «ՄՏպւած է անվան թարգմանութիւն», որտես՝ «rologium» (Վկայաբանուշանիսլութիւն):

Աերը, որոնք վարդ կոչվում այն մատյան-
ու վկայաբանություն-

«*«* Առնորդու Անձնացես»
թիւն աղօթից Պատարագի հաջոյի կուպուի Մեկնու-
⁶⁹ «Սրբայ Ներսէն Լամբրոննեսիկ», 1869:
պիսկոպուի խորհրդածութիւնը ի ոլ Տարտուի հ-
ուոյ և մալցնութիւն խորհրդոյ Պատարագ եկեղեց-
տիկն 1847: Տ. Ա. Ե.

⁷⁰ «Մեկնութիւն ամառոյ խորհրդոյ սրբն՝
բագին, արտահանեալ ի մեկնութիւնաց Խորո-
Անձնացնա Կովկասով և Ներսէսի Լամբրու՝
ոյ՝ Վերատեսչին Տարտոնի, կարճելով և պարզ-
բանելով Յովհաննու Սրբիցնուց», Կալիսառա, 1880:

71 Հման. Ավիշան, «Հայուսպատում», մասն Բ, էջ 507, ծառ. 2: Հ. Քյուրիտյան, «Երիզակ և Ենելեաց գալաք», Վենետիկի, 1953, էջ 280—281: Եղիշիկ արդ. Պետրոսյան, «Մըլիս Երգելեացո 'Հայաբում Բամառու...՝ աշխատութիւնը», Եջմիածին, 1973, № 9, էջ 14—20. № 11, էջ 43—48:

⁷² Հմմտ. Քյուրիան, էջ 211:

⁷³ Թղալոց գիրք անոնք, ըստ երևույթին, զրված է եղանակով՝ *Teclos quire*, որը տառերի շիփորմամբ դրած է: *Textor quire*: Արդեն խոսեցինք գի-զու համեմատության մասին (տես վերևուն ծառ. 47). *quire* (գիրք) բառի վերջուն տեսի է ունեցել և ու ուսումնական տեսքում: Խակ Տեղօրշուն-ի մեջ *quire* բառի աղավաղություն եղան է պասխան: *qu-gu* և *irc-nt*:

⁷⁴ Sku հրատարակությունը՝ «Գիրք բռլցոց. Մատուցագրութիւն Ամիսնեաց», Թիֆլիս, 1901:

⁷⁵ Ակինցան, «Կիւրիոն կաթողիկոս Վրա», էջ

37—44:
76 ህጋዊነት ከዚህ በዚያዥ ተስተካክለሁ እና ተስተካክለሁ
ሙስኩ ነኝ ስልጻችና ይመልከቱ የሆነበት፡ የዚያዥ ተስተካክለሁ
ሁሉም እንደሚታወቁ የጥቅም ተስተካክለሁ እና የጥቅም ተስተካክለሁ
የዚያዥ ተስተካክለሁ እና የጥቅም ተስተካክለሁ እና የጥቅም ተስተካክለሁ
የዚያዥ ተስተካክለሁ እና የጥቅም ተስተካክለሁ እና የጥቅም ተስተካክለሁ

36

Այս էին բոլանդակում հայ եկեղեցու ընդունած տոների կարգով և արարողությունների ընթացքում ընթերցվում էին համապատասխան օրերին:

Հայումավորը սկզբանակա աստրական և
հայկական աղբյուրների հիման վրա կազ-
մուկել էր Թ դարում Ս. Աստու ուստի վա-
ճակար Գագիկի ձեռքով և այդ պատճառով
անվանվել էր Աստոմադիր. իսկ հետագայուն
նորանոր խմբագրությունների էր Եւստարկ-
վել ու ընդունվել հմանական, աստրական և
հայկական աղբյուրներից առևախծ այլ հո-
թերով⁷⁷: ԺԳ դարում առեջածել էր արքա-
սի ժողովածուների մի կայսր խմբագրու-
թյուն, որը պաշտօնական գործադրություն-
մեջ էր և ծանոթ էր Տեր Խորաց կազմու-
թյուն (մատ. 1249 թ.) Հայումավորը չունեմ⁷⁸:
Անշոշու աս է, որ նկատի ունի Միքական
գրքերի ցուցակը և որը, որով խորթ հա-
նարկող հրատերի համարակա ա, արհանար-
եկի էր լատին գործիներ համար: Տեր
Խորացի Հայումավորը քիչ հետո հրա-
պարակ եկած առ Հայումավորները, որ
նրա հիման վրա համար էմայ էին Կիրակոս
Արքեղինց⁷⁹ և Գրիգոր Անապարզեցին⁸⁰, ար-

Ա, Վենտիկ, 1784, էջ 17-18:

⁷⁸ Σωματική διάκριση ορθονομίας συντελεστής είναι πολύτιμη για την απόδοση της ιατρικής πραγματικότητας. Η πραγματικότητα της ιατρικής πραγματικότητας είναι η απόδοση της ιατρικής πραγματικότητας στην πραγματικότητα της ιατρικής πραγματικότητας. Η πραγματικότητα της ιατρικής πραγματικότητας είναι η απόδοση της ιατρικής πραγματικότητας στην πραγματικότητα της ιατρικής πραγματικότητας.

Հատ Հ. Ն. Ալիբեկին՝ Տեր Խորավոյի Հայութ-
Վորքի հիմքում ընկած էր 991/92 թթ. Հովսեփ Կ.
Պուստոց կողմից խարզմանարար խմբագրված հո-
ւական Տոնածոյց-Հայութավորքը, որի մէջ նա, Տեր
Խորավոյի, Վահանան վարդապետի հանձնարար-
ւորմ, ավելացրել էր նավական նույթը. տես՝
Հանդէս Ամսօրեա, 1957, է 1-12:

⁷⁹ Կիրակոս Արքևոյց Հայութակութը կազմվել է 1252 թ.: Նու մի ընտիր օրինակն է՝ Երևանի Մաշտոցան Մատենադարանի № 7433 ձեռագիրը:

⁸⁰ Գրիգոր Ամանլարզեցու Հապամալուրի մասին, որը կազմվել էր ԺԳ դարի վերջերին, տես Ալիշան, «Սյունան», էջ 241:

դեմ լատինականունացուցի ազդեցության
էմ ենթակիւս:

Սոլրակած գիրքն ըստ այս հայուսարմաթյամբ, թէ «հայերն ունեն
որից շատ զրեր, որոնք պարտնակում են
բազմացի մոլորդաթյուններ»:

իշխան տեսնում ենք՝ «մողորական» գրքով ցուցակը, որ 18 կետերից է բաղկացն, իսասոորեն կարող էր պարունակել և կարունակում է ոչ թե 18 միավոր գիրք, այլ՝ ավելի, որովհետու եղել որոշ կետեր ներկայացնում են մեկական գիրք («Տօնապատճառ», «Հաստոյ արմատ» և այլն), որիշներ ներկայացնում են մեղինակետերի անոններ, որոնց որդարանաշրջիք տակ բանիքան կարող են հասկացվել մեկից ավելի գրքեր («Յովիսանեն Մանրակունի», «Յովիսանեն Օձնեցի» և այլն): Եվ այս գրքերը «մողորական» համարվելու համար ունեն մի ընդհանուր հատկանիշ. անկախ այն հանգամանքից, թե որքանք զուտ դավանարական գրվածքներ են կամ պատմական, իրենց ոգով ու լուժամբ բորբոքվածութիւն կանգնած են միաբանած դավանակունականների համար սա էր այդ գրքերի նիմնական ու մեծագույն արարու:

Սակայն հպատելի է, որ մոլորական համարվող գրքերի և հրանց հեղինակների թեութագրումները բացակայում են բարի-հակած ցուցանիւմ. չի ասկած, թէ ինչո՞ւն էր կայանում հրանցից յուրաքանչյորի մոլորականությունը: Այս սոսնիվ, և հարցի սոսնիվ լուսաբանման համար, հպատականարմադ կիմեր դիմու Պահենցի հախոր-ներից հատկապես Կեղծ-Դաւասկացուն, որին հիշատակեցինք վերևում, որովհետո նրա «Պատափանակիք առ Հայ» գրվածքուն հասուկ բնութագրումամբ հիշատակվում են գրքեր ու հեղինակների անուններ, որոնցից մի քանիսը նոյնին են Պահենցի լատինե-ուն մերժիցա ուսանում եռածների մեջ:

Այս Կեղծ-Դամանակացին, հայերին 26 մետրական կետեր վերաբերեցից հետո, բուռն կերպով հարձակվում է հրանց փակարորդեն Կանգ առնելով զանազան հարցերի վրա. իսկ հայոց գրքերի կապակցութան օրում է.

«Եւ արդ՝ ասացէք, Սուրբն Գրիգորիոս
ունէ՞ր գիրս, ունէ՞ր և կարգս եկեղեցւոյ, ու-
նէ՞ր պատարազի ալօթս, ունէ՞ր և եկեղեցի
օրհնելոյ կարգս, ունէ՞ր եպիսկոպոսաց օրի-
նութիւնս և քահանայից և սարկաւագս և
դպրաց և կրօնաւորաց, ունէ՞ր և թաղման
կարգս քահանայից և կրօնաւորաց։ Այս՝
ունէք ստոր և այսու կային զամն չորեք-
հարիսը։ Արդ՝ ո՞ո՞ են ամերիկն առևարձ։

Եթէ ոչ էին ընդունելիք, աստուածարեալքն և խաստունքն այնք բովիք և վարդապետք և վկայք՝ ընդէ՞ր ընկալեալք այնի վարեցան. Եթէ ընդունելիք էին, և նոքա ընկալան, և ո՞վ լաւ քան զնոսա էր, և զնոցան առներ: Եթէ այն ընդունելի էր, զի՞նչ խորհեցա Յոհան Մանդակունի, զայս ամենալն նորս առնելով. զի՞նչ և Մաշտոց ձեր նոր կարգ, զի՞նչ Յոհան Մայրագումեցի, զի՞նչ Եպիփան Կուզն, զի՞նչ Անանէ Շիրակացոյն գրեալն, զի՞նչ Անաստաս կաթողիկոսն, զի՞նչ Ուխտանէս, զի՞նչ Տօնապատճառն ձեր. ո՞չ այս ամենայն նոր և հակառակ առարկոցն դրուակի և նոցա եկեղեցեացն և ասանից նոցա և Սրբոյն Գրիգորի և իրոցն հետևողացն, և մինչն ցայսօր ամենայն բրիստունեալք հակառակը նեն»⁸¹:

Կեղծ-Դամակացին այլ հարցերի առթիվ նորից է հիշատակու «զԱնանէին մի քնակութան արտեսոս, կամ զՈւխտանէսի հայիութիւն Վրաց, կամ զՄաթիոսիկն պատմող, կամ զՏօնապատճառն»⁸²: Իսկ հետո, նաև, անգիտաբար իրար խառնելով դեպքերն ու ժամանակները, գրում է, որ Եզրի կայութիւնության (630—641 թթ.) օրերին կնքված միտրունից 160 տարի հետո (?) հայերը «ժողով արարեալ անոր ընդ Սուրբաց ունաց, ընկալան դարձեալ զմի քնութիւն և զիւաչեցարն ի Սուրբ Աստուածն ասել, և ընկեցեալ գրնամ խորհրդական աղօջս և զկարու՝ նորս արարին, գրեալու ծեռամբ Յովհաննու Մանդակունի և Մաշտոցի. և յանմ ժողովոյ, յետո ընկեցեալ զոօն Ավետեացն և զմարմնոյ Ծոնունի Տեառն, միայն Մկրտութիւնն տօնելով. և բազում պատճառու գրեցին այսորիկ և անհրանի յիրեաց Տօնապատճառի» և այլն⁸³:

Ինչպես տեսնում ենք՝ Կեղծ-Դամակացու գործուներով բավարար մանրամասնություններով է խոսում հայոց «մոլորական» գրերի և «սոնորյալ» հեղինակների մասին⁸⁴, և կարեի է առանց վարանելու ասել, թե լատինական ցուցակի բաղկացուիչ տարրերի մի որոշ մասը ժառանգություն էր Կեղծ-Դամակացուն հմանվող բլուզանդական աղբյուրներից:

⁸¹ Լուս, 1906, էջ 356—357:

⁸² Անդ, էջ 475:

⁸³ Անդ, էջ 960:

⁸⁴ Մենք այսուղ անենատ ենք թողնում լատինական ցուցակին չվերաբերող անունների կրկին հիշատակությունը Կեղծ-Դամակացունու, ինչպես՝ Մաշտոց, Եպիփան և Անանէ (անդ, էջ 475), Անաստաս կաթողիկոս և Անանիա Շիրակացի, որուք «նատեալ ի տան միայն, գրեցին նոր տոմար» (անդ, էջ 1124), դարձալ Եպիփան (անդ, էջ 1125):

Տվյալ դեպքում Կեղծ-Դամակացու միջոցով նախ մենք լրացուցիչ տեղեկություններ ենք ստանում լատինական ցուցակում հշանական անուններից Յովհաննու Մանդակունու և Տօնապատճառի «սոնորականության» բնույթի վերաբերյալ. և երկրորդ հաստատվում է, որ լատինական ցուցակի § 8 գրքի անունը, իրոք, ըստ մեր կուսանման, Ուխտանէս-ն է, որը ձեռագրով գրված կիցներ Uctanensis, բայց ընդորինակությունների և տպագրությունների ընթացքում աղավաղվել է. իսկ § 9 գիրքը, որը Մատթեոս-գիրք է կոչվում, իրոք պատմագիր Մատթեոս Ուխտացեցին է՝ «Մաթիոսիկն պատմող»: Բացի դրանցից՝ Կեղծ-Դամակացու գրությունը մեզ նաև թեղադրում է մտածել, որ լատինական ցուցակի § 12 գիրքը, որը հեղինակի անունն է կրում և նոշված է Maruscha կամ Marocha աղավաղ ձեռով, կարող է ինեւ Մայրագումեցի-ն (կամ Մայրոգումեցի), թեև նրա անունով Ավետարանների մեկնություն մեզ հայտնի չէ:

Սակայն պատեր ինքնարեարար, լատինական ցուցակի անուղակի թեղադրանքով, առաջ է գալիս «Յովհաննու Մայրագումեցի» և «Ավետարանների մեկնություն» գրություններից մեջ գրառությունը մի հայություն է:

Կապվելով Մայրագումեցի անվան հետ՝ ստիպված ենք մտածել, թե լատինական ցուցակի հիշատակած «Ավետարանների մեկնություն»-ն արդյոք այնպիսի մի գիրք չէր, որում, ի միջի ալլոց, պարզաբանված էր Հուկաս Ավետարանի իբ գլխի 43—44 համարներին⁸⁵ վերաբերող այն քննադրաների կամ կարծիքը, որ պաշտպանում էին մայրագումեցի կոչված աղամդակուները: Է դարի վերջերին Թեղողորո Քոթենավորի մի նախից տեղեկանում ենք, որ մայրագումեցի աղամդակուներն առարկելով, թե Քրիստոս «ոչ տկարութեամբ, այլ կարողութեամբ յաղթեաց մարտի թշնամույն», մերժում էին ընդունել վավերականությունը Ավետարանի հիշյալ տեսերի, որոնք «յաղօթակացութեանն զահաքրտնութիւնն պատմեն ամենակարող բանին Սատուծոյ»⁸⁶. իսկ Քոթենավորի աշակերտ Հովհաննես Օձնեցին ասում էր, որ նրանք, Ավետարանում Քրիստոս

⁸⁵ Ղուկ. Իբ 43—44 գրված է Հիսուսի մասին. «Եւ երեւցա նաև հրեշտակ յերկանից և զօրացուցաներ զնա. և եր ի տագնապի, և մտադիրութեամբ ևս կայր յաղօթս: Եւ նուշին ի հման: քըրտունը իրքն գլաւակն արեան որուն ողոն հեղեակ յերկիր»:

⁸⁶ Տես Հովհաննես Օձնեցու ճառերի վերջում, նկանակ նրան. մեջ. «Յովհաննու իմաստափրի Աւանեցոյ մատնագրութիւնը», Վեհենտիկ, 1833, էջ 148:

մարդկային որևէ հաստկության մասին խոսք տեսնելիս, հանդինում էին «աներկիխողարար ի գրեցեղոց անտի» որ զայնն քարոզէ ի բաց շնչել զրանոն», ասեղով, թե «որումնացան մշակացն է զայդ սերմանեալ»⁸⁷:

Ոչ այն հապատակով, որ պնդենք, թե մայրագումեցի աղանդավորների ար զաղափարների աղբյուրն անպայման Հովհաննես Մայրագումեցու գրվածքներն էին, մենք կարող ենք առ այժմ մատնացոյց անել այն փաստը, թե Քրիստոնութիւն և Օծեցու կողմից քննադատվող զաղափարներին համեմատում ենք նաև Յովհաննես Մայրագումեցու անունը կրող ճառական այն հատկանիւնը, որում մեզ հայտնի են «Կնիք հաւատոյ» կոչված ժղովածոյ մեջոցով⁸⁸:

Օրինակ՝ ենաց այդ մասին են «Երանելու Յովհաննեսու Մայրագումեցոյ» ի հաստառոց բանելու խորագրված հատվածի նետույլա տողերը.

«Բայց զայն ինչ, որ ո՞չ աստուածութեան պատշաճի և ո՞չ մարդկութեան նորին, զայն ո՞ւմ աստյանքուր», զո՞ւ արասցոք պարու քանզի արենաքիրուն ինելու արտաքրոյ և ամենայն քննորդեանց, ո՞ւ մարթի հաւատալ քանզի Աստուած և մարդ և եթ գիտենք զՔրիստոս, և այլ ոչինչ, և այս ո՞չ յԱստուած յարի և ո՞չ ի մարդուին»⁸⁹:

Բայց ովյալ դեպքում մենք դրանից աւելի ուշադրություն կիրավիրենք մի տեղեկության վրա, որին պատահում ենք բյուզանդական «Narratio de rebus Armeniæ»-ում հայկական ծագութ ունեցող քաղկեդոնական այդ անսանու գրվածքում, ներանի ունենալով, որ դա Հովհաննես Մայրագումեցու մասին քաղկեդոնական աշխարհում թշնամական կարծիքներ տարածող աղբյուրներից մենք են: «Narratio»-ում ապիստ է, որ Հովհաննես Մայրագումեցին ներկանելու կարծիքը կատարված մուծումներից էր համարում Ղուկասի Ավետարանի վերոհիշյալ երկու համարները⁹⁰:

Մենք չենք խոսում այն մասին, թե ո՞րքան կարող է ստուգ ինելու այս զաղափարների վավերականությունը՝ որպես Հովհաննես Մայրագումեցու սեփականություն, ինչպես և այն մասին, թե այսուղ իննամիական կապեր են նկատվութ «Կնիք հաւատոյ»-ի

⁸⁷ Անը, էջ 66:

⁸⁸ Հովհաննես Մայրագումեցու անունով հասպանները տես՝ «Կնիք հաւատոյ», էջ 52, 142—146, 253, 281, 288, 327—330 և 363—364:

* Տակած է պարեացուր, որը հավանաբար գրաշարական վրիպան է:

⁸⁹ «Կնիք հաւատոյ», էջ 328:

⁹⁰ Հովհ. G. Galitte „La Narratio de rebus Armeniæ“, p. 45, 327—328.

և «Narratio»-ի միջև: Այդ հարցերին համապատասխան որիշ աղիքունքներն էին աստամական արդ կարող հաշվի աղբյուրոց մետք, հարկ կինքի ընդունելի համարներ ենուկալը: Եթե «Կնիք հաւատոյ»-ում գտնվող և Մայրագումեցու անունը կրող հատվածներից մեկը հայու է տվել «Narratio»-ի և Մայրագումեցու մասին «Երեսափկության» մեջադրանքը արձաւանգրելու համար, ապա և պարզ է, որ բաղկարհներն աշխարհին ծանութ կինքներ հան այդ նոյն հատվածների ամբողջ բովանդակությունը: Եվ եթե մենք փորձենք պատուի որունել լատինական ցուցակի § 12-ում հիշատակիած «Ավետարանների մեկնարարան» ներքերը՝ ձեռնունակն չենք մնան: Մայրագումեցու անունը կրող այդ հատվածներուն Ավետարանների ոգու, նրանց վլայալքամեններից բխող վարդապետական տեսադրությունների և Քրիստոսի մարմնավոր կամքի երկվոյթների վերաբերյալ յորովի մեկնարանությունների կան. այնպես որ լատինական ցուցակում երևացող Մարտիւա կամ Maroche անունը, մեր կարծիքով, ներկայացնում է Մայրագումեցի (Մայրոգումեցի) անունը: Եվ արդեն զարմանալի կինքներ, եթե լատինական ցուցակի հեղինակին ծանութ եղած չինքներ իր հակաքաղկեդոնական գործունեությամբ քաղկեդոնական աշխարհում այնքան հայտնի Մայրագումեցին, որի մասին ասելությամբ են խոսում ոչ միայն վերոհիշյալ «Narratio de rebus Armeniæ»-ն (Ը դարի սկիզբ), այլև Փոտ պատրիարքն (Թ դ.)⁹¹: Մենք արդեն տեսանք, թե Մայրագումեցու մասին ինչպիսի՝ ասելությամբ է խոսում նույն Կեղծ-Դամակացին, որի ժամանակը, մեր կարծիքով, չի կարող ինելու ավելի վաղ, քան մեր դարի երկրորդ կերպ, բայց որ պատուի հիշատակվում է Մաթիոսիկն պատմող Մատթեոս Ուոնայեցին:

Ահա այն հապատառ, որ Կեղծ-Դամակացու «Պատասխանիք առ Հայ» գրվածքը բերում է լատինական ցուցակի թվանշանը ոչ միայն § 12 կետում Մայրագումեցի (Մայրոգումեցի) անվան հայտնաբերմամբ, և մի քանի այլ անունների ստուգմամբ, այլև որոշ լուս այնուկալու ցուցակի ամբողջ պարունակության վրա՝ ըստ էության և ըստ թեուլիքի:

Ներսէս Պալիենցը Կեղծ-Դամակացուցութեան վերաբերյալ:

⁹¹ «Թուղթ» Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց» (Բրատ. Հ. Ն. Ալիքմանի), Հանդէս Ամսօրեա, 1968, էջ 65—100 և 129—156:

⁹² Տես Լ. Մելիքսեթ-Բեկը, «Այս աղբյուրները Հայաստանի և նոյնի մասին», հն. Ա., Երևան, 1934, էջ 38—47:

և իր մղուս նախորդներից ոչնչով չեր տարբերվում իր գաղափարական կերպարով և հայ եկեղեցու դավանական դիրքերի ու ավանդությունների, ուստի և՝ Կիլիկյան Հայաստանում զարգացող ու ամրապնդվող ազգային շարժման, հանդեպ որդեգրած իր դիրքավորումով։ Եվ որպեսզի ակնհայտ դառնան նրա ունեցած դիրքավորման գաղափարախոսական հենարանները, պետք էր ճշգրտել ու պարզել նրա ցուցակում թվարկված անունները՝ ըստ ձևի և ըստ իս-

կության։ Այդ է, որ մենք փորձեցինք անել ներկա հոդվածում։

Պալիենցի կազմած այս ցուցակի ուսումնասիրությունը և նրանու եղած անունների ճշտումը կծառայի բացահայտելու, թե ԺԲ դարի վերջերից սկսած, և ԺԳ ու ԺԴ դարերում, գաղափարախոսական գրականության ինչպիսի՝ նյութերից էր օգտվում Կիլիկյան Հայաստանի ազգային շարժումը՝ լատինական Արևմուտքի ազդեցության դեմ պարփառելիս։

